**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Լոռու մարզում անտառվերականգնման համար ջերմոցի և հակակարկտային ցանցի ստեղծման ծրագիր»**

2024թ.-ի մայիսի 2-ին Լոռու մարզի Գուգարք գյուղում տեղի ունեցավ «Լոռու մարզում ջերմոցի և հակակարկտային ցանցի ստեղծման՝ անտառվերականգնման ծրագրի» ավարտական արարողությունը, որն իրականացվել է 2023թ.-ին:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՈԿԻ Յուտական, Վանաձոր համայնքի ղեկավարի խորհրդական պարոն Բեռնեցյանը, «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի հիմնադիր պարոն Գումուշճեանը, ինչպես նաև ծրագրի շահագրգիռ կողմեր և շահառուներ:

Այս ծրագրի նպատակն է բարելավել տարածաշրջանում աղետների կանխարգելումը՝ Լոռու մարզի Գուգարք գյուղում անտառվերականգնման նպատակով տնկիների աճեցման ջերմոց կառուցելու միջոցով և ջերմոցին կից տնկարանում հակակարկտային ցանցեր տեղադրելով:

Այս ծրագիրն իրականացվել է տնկիների քանակի և որակի բարձրացման նպատակով՝ ընդլայնելու ծառատունկի աշխատանքների ծավալները՝ դրանով իսկ բարելավելով մարզի բնական միջավայրը և տեղի բնակիչների կենսամիջավայրը: Տարեկան այս ծրագրից կօգտվեն մոտ 212,600 տեղի բնակիչներ:

Կառուցվել է ջերմոց և տնկարան

Դեսպան Առկիի ելույթը

Ժապավենի կտրում

Հիշատակի ծառի տնկում